ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նիստը վարում էր Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանը:

Նիստի աշխատանքներին ավագանու 27 անդամներից մասնակցում էին 17 անդամներ՝ Անանիկ Ոսկանյանը, Արթուր Աստոյանը, Արտակ Հարությունյանը, Ոսկան Վարդանյանը, Արման Աջամօղլյանը, Արման Տոնոյանը, Նարինա Վարդանյանը, Լիլիթ Հաջաթյանը, Գայանե Սալնազարյանը, Հայկ Գևորգյանը, Արմինե Աղրամանյանը, Գևորգ Ղահրամանյանը, Էմիլ Գևորգյանը, Վարդուհի Հովհաննիսյանը, Գոռ Պետրոսյանը, Մանուկ Գևորգյանը, Աստղիկ Պետրոսյանը:

Նիստին ներկա էին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Գրիգորյանը, ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Գայանե Վարագյանը, քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետ-իրավաբան Տաթևիկ Աղաքարյանը և համայնքի բնակիչներ:

Նիստի օրակարգը բաղկացած էր հետևյալ հարցերից.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին:
2. <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում 2022 թվականի համար տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու միասնական դրույքաչափերը, գույքի օտարման ու վարձակալության մեկնարկային գների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար վարձավճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի բնակավայրերի վարչական տարածքներում 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի բնակավայրերի, <<Նախադպրոցական ուսումնական հաստատությունների>> և <<Արվեստի դպրոցների>>

համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2022 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերը սահմանելու մասին:
10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին:
11. Արտակ Համլետի Հարությունյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին:
12. Վարդան Ստեփանի Մակեյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:
13. Արման Ռուբիկի Աջամօղլյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:

Նիստը վարողը նշեց, որ այս արտահերթ նիստը կայանում է անհրաժեշտությունից ելնելով, ժամկետների առումով կան հրատապ հարցեր, որ պետք է քննարկվեն, իսկ մանրամասնությունները կննքարկվեն հաջորդ նիստում և առաջարկեց հաստատել օրակարգը:

<<Միասնական Արթիկ>> խմբակցության անդամ Ոսկան Վարդանյանը մինչև օրակարգի քվեարկությունը ձայն խնդրեցև հանդես եկավ հայտարարությամբ նշելով.

Մեր խմբակցությունը ներկա չէ, քանի որ տեղեկացված չի եղել, իսկ ինքն աշխատանքի բնույթից ելնելով է ներկա: Պարզ է, որ ժամանակի սղության պատճառով է նիստը կայանում, սակայն չի պահպանվել ՏԻՄ օրենքի 65-րդ հոդվածի սահմանված դրույթները՝ արտահերթ նիստը գումարվում է ավագանու կանոնակարգի համաձայն, իսկ այս պահին բնականաբար կանոնակարգ չունենք, ավագանու արտահերթ նիստը անցկացվում է նախաձեռնողի սահմանված օրակարգով և ժամկետում, սակայն նախաձեռնությունից ոչ շուտ քան 3 օր, այս էլ է խախտվել, օրակարգի տրամադրման ժամկետը, որը 24 ժամ առաջ է՝ այդ էլ է խախտվել, իսկ օրակարգի նախագծերը չեն կարող դրվել քվեարկության, քանի որ ամբողջությամբ ուսումնասիրված չեն եղել և չեն ծանոթացել:

Ինչ վերաբերվում է բյուջեի քննարկմանը, ապա դրանք պետք է նախօրոք լինեին:Այսքանից ելնելով խմբակցությունը առաջարկում է հնարավորության դեպքում նիստը հետաձգել, այլապես խմբակցությունը չի մասնակցելու նիստին և ձեռնարկվելու են օրենքով սահմանված անհրաժեշտ քայլեր:

Նիստը վարողը մեկ անգամ ևս նշեց արտահերթ նիստը հրավիրելու պատճառները, հրատապության խնդիրները և Ա. Գրիգորյանին խնդրեց ներկայացնելու օրակարգի կետերը, որոնք բարձրաձայն ընթերցվեցին:

Ա. Ոսկանյանը հարցերի հետ կապված դիմեց խմբակցություններին: Արտահայտվեց Ա. Աստոյանը նշելով, որ համակարծիք է Ո. Վարդանյանի ասածի հետ և նշեց որ այս ծավալի նյութը առավոտ ունենալուց հետո հնարավոր չէ ուսումնասիրել և ճիշտ կլինի նիստը հետաձգել:

Կարծիք հայտնեց նաև Աստղիկ Պետրոսյանը նշելով, որ նիստը հետաձգել պետք չէ և օրակարգի որոշ հարցեր պետք է անպայման քննարկվեն:

Ո.Վարդանյանը առաջարկեց իր դիրքորոշումը դնել քվեարկության:

Նիստը վարողը ներկայացրեց, որ հին բյուջե հասկացողություն այլևս չկա, որպեսզի դրանով շարժվենք, պետք է առաջնորդվել խոշորացված համայնքի գաղափարով, ունենալ նոր կանոնադրություն, նոր բյուջե և այլն: Առաջարկեց քվեարկության դնել օրակարգը:

Քվեարկությանը մասնակցեցին ավագանու 16 անդամներ, որոնցից կողմ քվեարկեցին 15-ը և մեկ հոգի՝ Ա. Աստոյանը մնաց ձեռնպահ: Քվեարկությանը չմասնակցեց Ո. Վարդանյանը հայտարարելով, որ ստիպված է օրակարգը չքվեարկելու որովհետև օրենքի խախտմամբ է ընդունվել և լքեց նիստերի դահլիճը:

Օրակարգն ընդունվեց:

Ներկայացվեց և դրվեց քվեարկության օրակարգի առաջին հարցը, որին կողմ քվեարկեցին 14 ավագանու անդամներ, ձեռնպահ մնացին երկու անդամներ՝ Լիլիթ Հաջաթյանը և Արթուր Աստոյանը, որից հետո վերջինս հեռացավ նիստերի դահլիճից:

Օրակարգի 3-րդ և 4-րդ հարցերի քննարկման ժամանակ նշվեց, որ կիրառվել է գոտիավորման սկզբունքը՝ համայնքը բաժանվել է երկու գոտիների՝ Արթիկ համայնքի և շրջակա բնակավայրերի:

Քննարկվեց նաև Արթիկ համայնքի և մյուս բնակավայրերի դրույքաչափերի վերաբերյալ հարցը, որտեղ նշվեց, որ Արթիկ համայնքում գործող դրույքաչափերը մնացել են նախորդ տարվա գործող դրույքաչափերով, իսկ մյուս բնակավայրերում նախկինում գործող դրույքաչափերը պահպանվել են, բացի 3 տեսակի վճարներից՝ 1) մանկապարտեզները մեկ երեխայի համար սահմանել ամսական 5000 դրամ, 2) արվեստի դպրոցներում մեկ սանի համար սահմանել ամսական 2000 դրամ, 3) աղբի վարձ է սահմանվել մեկ անձի համար ամսական 70 դրամ: Նախագծի վերաբերյալ տեղի ունեցան քննարկումներ և առաջարկություններ, որի արդյունքում քննարկումներից հետո առանձին-առանձին ընդունվեցին նախագծերը:

Ներկայացվեց օրակարգի 5-րդ հարցը և դրվեց քվեարկության:

Օրակարգի 6-րդ հարցով ներկայացվեց համայնքապետարանի աշխատակազմի նոր ձևավորվող կառուցվածքը: Եղան հարցադրումներ, տեղի ունեցավ քննարկում: Նախագիծը դրվեց քվեարկության:

Օրակարգի 7-րդ և 8-րդ հարցերով առանձին-առանձին ներկայացվեցին Արթիկ համայնքում և մյուս բնակավայրերում գործող ՀՈԱԿ-ների կառուցվածքները, հաստիքացուցակները և դրույքաչափերը: Յուրաքանչյուրի վերաբերյալ տեղի ունեցավ քվեարկություն:

Ներկայացվեց օրակարգի 9-րդ հարցը և դրվեց քվեարկության:

Օրակարգի 10-րդ հարցով ներկայացվեց 2022թվականի բյուջեի նախագիծը՝ զեկուցող ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Գ.Վարագյան: Տեղեկացվեց, որ բյուջեն հավասարակշռված է, եկամտային մասը կազմում է 1822982200 դրամ, նույնքան էլ ծախսային մասն է: Բյուջեի մեջ սեփական եկամուտների չափը կազմում է 27.2 % կամ մոտավորապես 500մլն դրամ, որի մեջ հարկային եկամուտները 62.63%:

Ընդհանուր դրույթներով ներկայացվեց եկամտի աղբյուրները և ծախսերը:

Տեղի ունեցավ քննարկում, որից հետո բյուջեի նախագիծը դրվեց քվեարկության:

Օրակարգի 11, 12, 13 –րդ հարցերը վերաբերվում են համայնքի ղեկավարի առաջին տեղակալի և երկու տեղակալների ընտրությանը: Ներկայացրեց համայնքի ղեկավարը: Հարցերն առանձին քվեարկվեցին:

Օրակարգի 3-ից 13-րդ հարցերը քննարկումից հետո ընդունվեցին ամբողջությամբ՝ միաձայն:

Աստոյան Արթուր

Հարությունյան Արտակ

Աջամօղլյան Արման

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Հաջաթյան Լիլիթ

Վարդանյան Ոսկան

Ոսկանյան Անանիկ

Սալնազարյան Գայանե

Գևորգյան Հայկ

Աղրամանյան Արմինե

Ղահրամանյան Գևորգ

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Պետրոսյան Գոռ

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Աստղիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք

2021 թվականի 30 դեկտեմբերի